Այդ բանը լաւ է ըմբռնել հեղինակը, ուստի երբեք չի փորձում մօտենալ լուծման: Այդպիսի հարցեր չեն լուծւում, այլ թողնւում են ընթերցողին, ինքն իր մէջ որոճալու ու եզրակացնելու.– թէեւ այդ եզրակացութիւնն էլ սխալ պիտի լինէր՝ նոր եզրակացութիւնների հասնելու համար: Լուծել այդ հարցերը՝ կը նշանակէր հոգին զատել մարմնից առանց մէկին կամ միւսին վնաս հասցնելու, իսկ այդ անկարելի է:

Թէեւ հեղինակը չի լուծում հիմնական հարցը, բայց նա իր համակրութիւնը արտայայտում է այս կամ այն հերոսին, նրա յաջողութեամբ կամ նրա յաղթանակով:

Երկու կարեւոր գործող անձինք կան գրքի մէջ – *Վանահայրը* եւ *Աբեղան:* Վանահայրը վերացականի, գաղափարականի, գրքի մէջ երկնայինի ներկայացուցիչ է, իսկ Աբեղան՝ աշխարհայինի: Առաջինը՝ սկզբում աշխարհիկ մարդ՝ յուսախաբ կեանքի ձախող բաղդից, Սեւան է ապաստանել այնտեղ վանական մշուշի ու միայնութեան մէջ թաղելու իր արտասուքը, իր մեծ վիշտը,– եւ կամաց կամաց աշխարհայինը մոռնալով, դառնում է հոգեւորական՝ բառի ընդարձակ մտքով, ու անձնատուր լինում իր հոգեկան պահանջներին: Միւսը՝ Աբեղան, ծնունդ վանական կեանքի, մանուկ հասակից Վանահօր ձեռքով վանք փոխադրուած, աշխարհիկ կեանքից բոլորովին հեռու, անապատականի յատուկ կեանքով ապրած՝ մէկէն – Սէդան փրկելու պատահական դիպուածով – յեղաշրջւում է, հոգեպէս տակն ու վրայ լինում, մարմնի ու սիրոյ երկրպագուն դառնում: Այնուհետեւ Սէդան նրա երազների աղբիւրն է, նրա կեանքի նպատակը: Ձգտում է հասնիլ անոր: Եւ ինչպէս որ առաջին անգամ նրան հանդիպել է ջրերում, նրան մշտապէս ունենալու համար ջուրն է նետւում:

Որեւէ գրուածքի ամբողջութիւնը գնահատելու համար անհրաժեշտ է որ նրա մէջ ցուցադրուած դէմքերը եւ տիպարները յաջողուած լինին եւ ամբողջ գործողութեանց շարքի ընթացքում աստիճանական զարգացմամբ բնական վերջաւորութեան յանգի: Երբ սաղմնաւորուած զգացումը